

տարի վերջը կը գրէր, չէր կրնար անգիտանալ նըշխարներու սրբապղծութիւնը. կը մնայ բացատրել թէ ինչ ըսել կ'ուզէ: Կամ կը կարծէր թէ հեթանոսները նշխարներու մէկ մասը հանած էին, կամ իր ժամանակի մարդոց հետ գաղափարակից էր թէ նոյն իսկ գերեզմանը նշխարներէն պարպուած ըլլալով հանդերձ, զանոնք պարունակած ըլլալուն համար, կ'ըլլար մասունք մը ամէն բանէ աւելի նուիրական: Շատերը յետոյ, անգղիացի ուխտաւոր մը, Վիլլիպալա 725 ին Ս. Երկիրը այցելելով, կը պատմէ թէ այս թըւականին «Ս. Յովհաննէս կը հանգչէր (ի Սեբաստ) Աբղիու և Եղիսէ մարգարէներու հետ»: Միւենոյն համոզումը ունի Թ. զարուն հեղինակը Commemoratorium de Casis Die ի ուր կը կարդացուի. «ի Սեբաստ, կը հանգչի Ս. Յովհաննու մարմինը»: 1180 ին, յոյն վանական Փոկաս կը գրէ. «Բանտին վրայ (Ս. Յովհաննու, ի Սեբաստ) շինուած է եկեղեցի մը ուր կը գրտնուին երկու եղջիւրներ՝ մին կը պարունակէ Ս. Կարապետին այրուած մարմնոյն աճիւնները, միւսը Եղիսէինը»: Միւենոյն եկեղեցիին մէջ կը տեսնուէր նաև աման մը որ կը պարունակէր Յովհաննէս Մկրտչի ձախ ձեռքը: Վերջապէս Ludolphe de Sudheim կ'ապահովէ թէ Յորդանանի մօտ, Յովհաննէս Մկրտչի վանքին մէջ կը պահուէր Յովհաննու Կարապետի մէկ բազուկը:

570 ին առաջին անգամ ըլլալով կը յիշատակէ անանուն ուխտաւոր մը Սեբաստի Ս. Յովհաննու Կարապետի եկեղեցին. «Թարորէն, կը գրէ, եկանք դէպի Տիրեբական ծովը՝ քաղաք մը որ երբեմն կը կոչուէր Սամարիա, իսկ այժմ Նէպոլիս (Նապոլես) կայ ջրհոր մը ուր Տէրը ջուր ուղեց Սամարացի կնոջմէհոն շինուած է Ս. Յովհաննէս Մկրտչի պաղիւ-